

ՄԻՐՈ ԽՈՍՔ

Յոթ Խոսք Խաչի Վրայից

Մաս 3

«Եվ Հիսուսի խաչի մոտ կանգնած էին նրա մայրը, և նրա մոր քույրը՝ Մարիամը Կղեովպայի կինը, և Մարիամ Մագդաղենացին: Հիսուսն էլ տեսնելով իր մորը և այն աշակերտին՝ որ սիրում էր, որ մոտիկ կանգնած էր, իր մորն ասեց. Ով կին, ահա քո որդին: Հետո ասեց աշակերտին. Ահա քո մայրը. և այն ժամանակից այն աշակերտն իրան մոտ առավ նրան:» Հովհաննես 19:25-27

Հիսուսի նման սիրելու համար պետք է...

1. Խնամք տանեմ իմ սեփական ընտանիքին

- Ուշադրությունս իրենց նվիրելով

«Պարվի՛ր քո հորը և մորը.» Ելից 20:12

- Իրենց կարիքները հոգալով

«Որբնայրիներին պատվիր՝ որ ճշմարիտ որբնայրի են: Բայց եթե մեկ որբնայրի որդիկ և թոռներ ունենա, թող առաջ սովորեն իրանց ընտանիքումը որդիական սեր ցույց տալ և փոխարեն հատուցանել ծնողներին. որովհետև սա բարի է և Աստծո առաջին ընդունելի:» Ա Տիմոթեոս 5:3-4

«Բայց եթե մեկը իրանների և մանավանդ ընտանիքների համար խնամք չտանի, նա հավատքիցն ուրացած է և անհավատից էլ չար է:» Ա Տիմոթեոս 5:8

- Իրենց հենարան լինելով

«Ամեն ժամանակ սիրող է բարեկամը, և եղբայրը նեղ օրվան համար է ծնվում:» Առակաց 17:17

2. Ուրիշ հավատացյալների հետ վարվեմ, ինչպես իմ ընտանիքի անդամների

«Մերին սաստիկ մի հանդիմանիր, այլ հորդորիր ինչպես հոր, երիտասարդներին եղբայրների պես: Պատավներին մայրերի պես, մատղաշ կանանցը՝ քույրերի պես բոլոր սրբությունով:» Ա Տիմ 5:1-2

«Եղբայրսիրությունում իրար վրա գթած եղեք. պատիվ տալու մեջ իրար առաջ անցեք:» Հռովմայեցիս 12:10

«Ուրեմն քանի որ ժամանակ ունենք, բարի գործենք ամենին, մանավանդ հավատքի ընտանիքներին:» Գաղատացիս 6:10

«Իրար բեռը վեր առեք, և այսպես Քրիստոսի օրենքը կատարեցեք:» Գաղատացիս 6:2

3. Սովորեմ տեսնել ուրիշների ցավը, եթե անգամ ես ցավի մեջ եմ

«Ձեր ամեն մեկը թող այն մտածի, որ էլ Քրոստոս Հիսուսումն էր.» Փիլիպպեցիս 2:5

«Արդ Քրիստոս որ մարմնով մեզ համար չարչարվեցավ, դուք էլ նույն մտքովը զինվորվեցեք որ մարմնով չարչարվողը մեղքից դադարեց:» Ա Պետրոս 4:1

4. Հոգամ ուրիշի կարիքները, եթե անգամ ես կարիքի մեջ եմ

«Ապա մեզանից ամեն մեկը թող հաճո լինի ընկերին դեպի բարին՝ շինության համար:» Հռովմայեցիս 15:2

«Սրբերի պիտույքներին հաղորդ եղեք. հույրասիրության հետևեցեք:» Հռովմայեցիս 12:13

Հաջորդ Կիրակի:

ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Հովիվ Սարո Խաչիկեան